

ԱՎՍՏՆՈՐԻ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12	Ֆր
Տարեկան	6	"
Վեցամսեայ	3	"
Արտասահմանի համար տարեկան	15	"
Վեցամսեայ	8	"
Անկերիկայի համար	3	սլր.
Տարեկան	1.50	"
Վեցամսեայ	0.80	"

Երանցումը տող տող շին երեսին համար 40 ս. վսի վերին երեսի համար 20 սանթիմ. է. երես մեկ անկերիկային համար 20 0/0 գնդկերի վայր

Վառանջի համար մեկ 40 սանթիմ

ՇՈՒԲԻ

ՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐ ՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇՈՒԹԻ ԵՒ ՇՈՒԲԻ ՕՐՆԵՐ

Redakcija na vobstnik
"Шажумъ"
Варна
R. P. Kalemcarian
(Auptrich)
on du journa
"Charjoun"
Varna (Bulgarie)

Արտասահմանի համար
մեկ 3
(20 ՍԱՆԹԻՄ)
Պուշկարիոյ համար
մեկ 8
(15 ՍԱՆԹԻՄ)

Գրութիւնք և՛ չէ՛ սրտի

ՄՕՏԵՆ ՃԱՆՉԱՆՔ

Ռուս կարավարութեան կատարած վերջի բարբարոսական յափշտակութիւնները համայն հայութեան ուշադրութիւնը կեդրոնացուցին միայն մէկ կէտի մը վրայ, Ամէն զգացող հայու մտածողութեան առարկան դարձած է հիմա Ռուսահայաստանը, Հայութեան այդ ազնիւ կոնցիւն անհամակիրի գէպի անոր ճակատագիրը անզգայ տարրերն անգամ ստիպուած եղան վայնասուն բարձրացնել և կոկորդիլոսի արցունքներ թափել Մենք ամէն օր լարուած ուշադրութեամբ կովկասէն «Խարբիկոնի» կըստասենք, Հարուածը ծանր էր, Հայութիւնը ցնցուցաւ և տուաւ ազգային ինքնագիտակցութեան փայլուն ապացոյցներ: Այստեղ փառքի և պատուի ծիրանին ամէնէն առաջ կը պատկանէ իրեն՝ կովկասահայութեան, որ սէգ ու հպարտ ինչպէս իր բազալընայ լեռները ցըցուցաւ ռուս կառավարութեան գէպ և չը համակերպեցաւ կատարուած անլուր անիրաւութեանց: Զայրոյթի ու բողոքի հուժկու սրտուովը գլորեցուց Պետրբուրգի նախարարներու պալատները և Պէտլէ հեռագրեց Կալիցինին, որ տեղի տայ, Հայակեր գաղանը յամառեցաւ, բայց հայ ահարկիչներու սուրբու հարուածներուն տակ ան զըջալով զըջաց և անիծեց իր ծնած օրը... ու այսօր մահուան անկողին մէջ կուլայ իր սեւ բազը: Իրաւունքներուն ու ազատութեանը համար քաջազնական կուռի գուրս եկող ժողովուրդը իր վրայ հրաւիրեց քաղաքակիրթ աշխարհի ուշադրութիւնը և պատճառեց հիացմունքի «Լեօրպէէն» ֆրանսական առաջնակարգ թերթերէն մին, Հայերը բազալտեց Զուրեգերիացիներուն հետ և հռչակեց, որ Հայութիւնը իր մայրական արգանդէն կը ծնի «Կալիցին» ծէլոնը:

Ռուս գրաւեց մեր եկեղեցական կալուածները և այսօր մեր ձեռքերի Հայրապետին թախանձագին ազաչանքներուն մերժողական լիբը հեզնանքով մը կը պատասխանէ. բայց հոգ չէ, հի սիսի արջը չպիտի հասնի իր նպատակին: Հայերը ցոյց տուին, որ երբէք չպիտի ռուսանան և միջոցներ պիտի գտնեն իրենց գոյութեան հիմունքները աւելի ամրապնդելու:

Այս բոլորին հանդէպ ինչ կը մնայ մեզ՝ արտասահմանի հայրուս: Մտէն ճանչնալ կովկասահայ ժողովուրդը և այդ մայրաղբերէն կենսական սնունդ քաղելով մեր ազգ. կեանքին տալ նպատակաբար ուղղութիւն: Բայց ինչպէս մտէն ճանչնանք Ռուսահայաստանի և թրքահայաստանի միջև չկայ հարաբերութիւն, փակուած են ճամբաները և դադարած ամէն յարաբերութիւն, իսկ մեր գաղութները շատ հեռու են կովկասէն, իհարկէ ասոնք մեծ դժուարութիւններ են, բայց մամուլի ու գրականութեան միջոցաւ մենք կարող ենք շարունակ մտաւոր հարաբերութեան մէջ ըլլալ հայութեան այդ խոշոր վանդուածին հետ: Ռուսահայաստանի մէջ ծաղկած է գրականութիւն մը, որ կը կրէ զուտ հայկ. դրօշմ: Պօլիս Հայաստանէն շատ հեռու և շարունակ օտարներու սղոցեցութեան տակ ըլլալով սրտաղբեց ճղծիմ և հիւանդոտ գրականութիւն մը՝ լոյրովին հեռու հայկական կեանքի արտագրութիւնը ըլլալէ: Իհարկէ բացառութիւններ յարգելի են: Այսպէս չէ Ռուսահայաստանի մէջ. այնտեղ հայկական հողի վրայ ծնաւ ու սնաւ գրականութիւն մը, որ հայ ժողովրդի կեանքը կը պատկերացնէր շինչ հայելիի մը պէս: Ասկէ զատ կովկասեան մեր գրականութիւնը զալ քայլաւ իրական և ըջալիստական հողի վրայ, հեռու մնալով ամէն բան գաղութանքներէ և երազական ցնորքներէ:

Ռուսի մտնեալով այդ գրականութեան և ուսումնասիրելով զայն մենք կը կարողանանք մտէն ճանչնալ կովկասահայութիւնը, եւ այնքան զժուար չեն կովկասահայ գրականութեան արդասիրքները ձեռք ձգել, չուն թէեւ ռուս կառավարութիւնը գոցեց հրատարակչական ընկերութիւնը, սակայն մասնաւոր անհատներու ջանքերով շարունակ լոյս կը տեսնեն էջանագրին հրատարակութիւններ:

Առաջարկուած ուղղութեամբ մեր ընթացողներունը իրութիւն մը տալու համար «Շարժում» թուալին ներածին չափով մենք երբեմն կովկասահայ գրականութեան պիտի գնենք նմոյշներ: Ստորեւ «Մուրճ» կարաստը պնք մեկ էն շնորհալի բանաստեղծներէն Աւետիս Իսահակեանի մէկ սիրուն կտորը. յետագային կը գնենք նաեւ ուրիշ ընտրովի կտորներ:

Կովկասի մէջ կայրին մտաւորապէս երկու միլիօն հայեր, ուստի կովկասը թրքահայաստանի հետ կը կազմէ այն ուժեղ սիւնը, որու վրայ կը հանգչին մեր գոյութեան բոլոր յոյսերը: Անհրաժեշտ է ուրեմն կովկասահայութիւնը մտէն ճանչնալ:

Մարգարէտեմի

Իմ Հայրենիքին կարօտ մնացի. Օտար աշխարհում, խեղճ որբի նման Անտուն ու անտէր լուս թափառեցի. Մեն-մենակ, անոք ու անօգնական... Իմ սիրտն այն տեղ է, ուր բարձրագոյն լեռներն են հսկում այն երկրի վերայ: Ուր եղիկները արծիւներէ հետ Անդունքից անդունդ թռչում են անաս:

Մայր իմ ժողովուրդ, գէպի քեզ կը գամ, կը գամ դէպի քեզ Հայրենի աշխարհ: Ինչ որ վե՛ն ունիմ, սիրով ձեզ կը տամ, եւ սիրտս, կեանքս միայն ձեզ համար:

Ա. Իսահակեան

Է. ԱԿՈՒՆԻ
ԿՈՎԿԱՍԵԱՆ ՎԵՐԻՔԵՐ

Դիւն 3 ֆր. 20 սթ.

Դիւնը համար դիմել Վառնա Բար կէն Սիւնի ընթացարանին վարչութեան: Ճանապարհածախսը գնողին վրայ է: Դրամը կանխիկ վճարելի:

ՆՍՅ ՅԵՂԱՓՈՒԱԿԱՆՆԵՐԸ
ՍԱՍՈՒՆԻ ՄԷՋ

Անգ. փոխ-հիւպատոսին տրուած «եղեկագրին պատճէնը (Երօ Արմէնիայէն թարգմանած)

Մեծայարգ Տէր,

Իմացանք որ անգլ. կառավարութեան կողմէ Մուշ զրկուած էք մտէն ճանչնալու համար Տարունի եւ Սասնոյ հայ բնակչութեան գրութիւնը եւ զայն իր ճամբիս գոյներով ձեր կառավարութեան տեղեկագրելու համար եթէ ձեր այցելութիւնները սահմանափակէք միմիայն գլխաւոր կէտերու շուրջը, որոնք թուրք պաշտօնեաներով ու լրտեսներով յեցուն են, ձեր ստանձնած պաշտօնին յաջողութիւնը զժուար պիտի ըլլայ, քանի որ կառավարութիւնը պիտի ջանայ ձեռն հեռու պահել բոլոր գանգառները, բոլոր ստապողները, լսկ ձեղի մտնեալու յանդէպները խստի պիտի պատժուին գանաահարութեամբ կամ բանտով, Ընդհակառակը պիտի ճգնին ամէն բան ձեր շուրջը խաղաղ ու գուարթ ձեռացնել, եւ դուք այն ատեն միայն կարող պիտի ըլլաք ձեր գործը ճամբարապէս ի գլուխ հանել, երբ վստահելի անձերով շրջապատուած՝ ձայ զիւղերը մանկք, երբ այցելէք հետադարձ մտոցուած անկիւնները, Հոն հայ կեանքին սխուր իրականութիւնը ձեր աչքին առջեւ պիտի պատկերանայ իր բոլոր սարսեցուցիչ ահաւորութեամբ, իր սրտամորժոք մարտիրոսութեամբ:

Ձեր Մուշ բնակութիւնը թերեւս կարճ ժամանակի մը համար յետաձգէ Սասունի հայ բնակչութեան ոչնչացումի գործը, որ այժմ թուրք զորքերով ու քիւտ աւազակախմբերով շրջապատուած, հոգեւորքի ժամերով կը տանջուի: Բայց մտէք անգամ մը Տարունի լայնատարած դաշտին գիւղերը, այցելեցէք կենձէ, Վարդօ, Խնուս, Պուլաւը, Ախալքաղը:

վարութիւնը առանց քննութեան գիւղին քահանան եւ երեւելիները կը բանտարկէ, իոկ քիւրտ ոճրագործները ազատ կը թողու:

2. Պիթիլիզի մէջ, Ալուիս աւանտ ալրի կին մը իր երեք զաւակներով եւ Վարդան անուն անձ մը կնոջ ազգականներէն, որոնք Ավէրմէյտան թաղը կը բնակէին, առտու մը իրենց անկողիններուն մէջ սպաննուած գտնուեցին: Ոճիրին հեղինակները յայտնի քիւրտեր են, բայց կառավարութիւնը անգիտանալ կը ձեւացնէ:

3. Խուլթիկէն Աբրահամ Նազարեան, տեղւոյն էրեւելիներէն, իր ննջասենեակին մէջ առնելիօրէն յոշոտուած գտնուեցին: Խորձակի գիւղապետ, Սարգիս Բոզոբան նմանապէս իր տանը մէջ սպաննուած է եօթը քիւրտեր, որոնք մինչեւ այսօր ազատ կը շրջին:

4. Մկրտիչ Ղազարեան, Ուրտարէ գիւղապետը քաղաք եկած ատեն ճամբան սպաննուեցին: Մեծօն գիւղի երեւելիներէն Խիրքո Սերքոբան նմանապէս ըսպաննուած է իր գաջի մէջ աշխատած ատեն:

5. Աղրներ գիւղէն Ղազար քիւրտէ մը սպանուած է ոչխարները յախշտակել թոյլ չի տալու համար, կառավարութիւնը կը ճանչնայ յանցաւորները, բայց ոչինչ չընեն:

Այս և ուրիշ գէպեր բացարձակօրէն կը հաստատեն թէ կառավարութիւնը քիւրտերուն հետ միացած է հայ ցեղի բնաջնջումը ի կատար ածելու համար:

(Լ. Եօրթեհեան) Ծարուակելի)

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Ռուսիա լրբութեան սահմանը կանցնի: Բլէզէ Հայրապետին յայտարարելէ ետք թէ եկեղեցական կալուածներու գրաման համար ելած հրամանը անդառնալի է, հիմա էլ միաժին զրկած է աւելի լիւր հրամանագիր մը, որուն մէջ կը յայտնէ, որ հայ եկեղեցական վարչութեան համար կը ծրագրուի «նոր օրէնք մը» և կը պատուիրէ կաթողիկոսին ու Սինոթին մինչեւ ալ օրէնքի հաստատուիլը նոր առաջնորդ կամ վանհայր չընտրել, վարդապետ, ֆահանայ և սարկաւազ չը ձեռնադրել, առանց կառավարութեան արտօնութեան ուսուցիչ կամ սերիչ պաշտօնեաներ չը կարգել: Ամեն բանի համար պէտք է լուր տալ կովկասի կառավարչապետին և չարժիլ ըստ անոր հրամանին:

—Վիէննա բնակող հայ կին մը՝ տիկին Աղսանի Քէրէտէճեան 20,000 ֆր. ի կտակ մը ըրած է

աղգին: զայն կրթական գործի յառաջդիմութեան ծառայեցնելու համար, Վաճառական Պ. Սարուիթին Սէլեան համոզած է տիկինը այս ազգօգուտ քայլը առնելուն մէջ:

Ականջը խօսի մեր Պուլկարահայ հարուստներուն և վաճառականներուն, որոնք բոլորովին անտարբեր են գէպի կրթական գործը:

—Կիլիկիոյ կաթողիկոսը ամեն տրամագրութիւն ցոյց կուտայ իր թեմին օգտակար դառնալու և հոն կրթական գործը յառաջ մղելու: —Մենք կը ցանկայինք որ նա չը յոգնէր իր սկսած աշխատանքներուն մէջ և դառնար օգտակար: Կիլիկիոյ մէջ մանուսնդ կրթական գործը կը կարտի լուրջ խորհողներու և ձեռնհաս մշակներու:

—«Հայրենիք»էն կիմանանք, որ Հ. Յ. Գաշնակցուիթեան Մանչէսթըրի կոմիտէին ժողովին մէջ ինչպիսի երկրի կոուղներուն հանգանակուած է 115 սուլար, Նիշէի կոմիտէին միջոցաւ 750 սուլար, Գանքըրաի կոմիտէին 111 սուլար:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ազգային ժողովին մէջ վիճարանութեան նիւթ զարձաւ նոր տարուան պիւտճէն: Երեսօրիսան Գրիտով քննադատեց այս ուայն տուրքերուն վրայ եղած յաւելումները: Բայց քով նոյնպէս անսեղի գտաւ եղած յաւելումները: Անգամ մը Ռաչօ Բէթրով յայտնած էր, որ պատերազմական պիւտճէն կարելի էր 17,000,000 ֆր. ի իջեցնել: Բայց քով հարցուց, որ ինչու՞ հիմայ 23,000,000 ֆր. քանքարար կը համարուի: Իչեղով խօսելով զօրքին վրայ, յայտնեց որ Պուլկարիոյ մշտական բանակի թիւը շատ մեծ է, և եթէ այսպէս շարունակուի պիտի սպառուի երկրին ոյժը, ըսաւ թէ՛ կառավարական պաշտօնատուներու մէջ ծառայողներու թիւը չափէն աւելի է և հաստատեց, որ Աւստրիոյ մէջ 1000 հոգիի համար կայ մէկ պաշտօնեայ մը, Ռուսիոյ մէջ իւրաքանչիւր 1000 հոգիի համար կան 12 պաշտօնեաներ:

Բէթրով ճառախօսներուն պատասխանելով ընդունեց յաւելումներու երկրին համար ծանրութիւն մը ըլլալը, բայց և զանոնք անհրաժեշտ գտաւ:

Միխայիլովսքի խիստ կերպով քննադատեց Բէթրովի գործերը:

Բարձրացաւ մեծ աղմուկ պատգամաւորները սկսան իրար հայհոյել, նախարարը առաջարկեց Միխայիլովսքին դահլիճէն դուրս հանել, որուն վրայ Միխայիլովսքի նախարարը խոզ անուանեց, բայց անոնք ալ կատարելագործուած պէնքեր չու:

կեց Միխայիլովսքին դահլիճէն դուրս հանել, որուն վրայ Միխայիլովսքի նախարարը խոզ անուանեց: Բէթրով պատասխանեց նոյն բանով: Վերջապէս Միխայիլովսքի ստիպուեցաւ դուրս ելլել:

—Ս. Նիքօլաի տօնին առթիւ իշխանին և Յարին միջեւ փոխանակուեցան հետագիտներ: Իշխան Յէրաիման շնորհաւորեց նաեւ Մօնթէնէկիոյի նիքօլա իշխանը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Ռուսիոյ և Աւստրիոյ դեպանները սահանջեցին Սուլթանէն շուտով Մակեդոնիա զրկել իտալացի պաշտօնեաները և երկու պետութեանց գործակալները:

—Ահմէտ Ալի փաշայի որդին իլչէթ պէյ, որ ծանօթ գէմք մըն է եւրոպացի դիւանագետներու շրջանին մէջ, Սուլթանի հրամանով աքսորուեցաւ:

ՌՈՒՍԻԱ

Գիշնէզի զարը վերջացած է, եղան տաճանակիր աշխատութեան և բանտի գտտապարտուողներ: Բայց հրէսապանութեան մէջ ամենէն շատ յանցաւոր օտար կանութիւնը մնաց անպատիժ:

ՍԵՐՊԻԱ

Օտար պետութեանց դեպանները Պէլլերատը ձգելով կը հեռանան, որ ծնունդի և կսղանդի տօններուն սովիւ ստիպուած շրջան պալատ երթալ և թագաւորը շնորհաւորել:

Եւրոպացի դիւանագետները գեռ չեն ուզեր հաշտուիլ Պելլերատի արքայապանութեան հետ:

—Իւսքիւպի սերպիական եպիսկոպոս Ֆիթիլեանը մեռած է: Անոր տեղ պիտի նշանակուի Սերաւտիան Տօլուչով եպիսկոպոսը:

Ա Ի Ս Տ Ր Ի Ա

Աւստրիոյ մէջ գտնուեցաւ մամուլի ակադա մը՝ մէկու կէս մէթր երկայն, 26 քիւ ծանր:

ԱՆԳՂԻԱ

Անգլիա Իիպէթ զրկած է նոր զօրք՝ բանակատեղին ուժեղացնելու համար: Թիպէթցիները չեն դիմադրեր, անոնք յայտնի են իրր խաղաղ և երկչոտ մարդիկ: Միայն վանականները կուտան են, բայց անոնք ալ կատարելագործուած պէնքեր չու:

նին և կուրի մէջ կը գործածեն աղեղ ու նիզակ: Իիպէթի մէջ եղած շինական փոքրիկ գունդերն ալ խաղալիքներով շքազած են, այնպէս որ անգլիացի զօրավարը առայժմ իր փոքրաքանակ զօրքով գրութեան տէրը պարձած է:

ՆՊԱԿԱՏՈՒՓ

Բարիդ. — Ե. Ե. Սյդ հարցը բաւականին ծեծուած է: Չարձեր ինկած մարդով մը զբաղի: — Հաւթուան. — Կ. Ժընէվէն կամ Դուրէժէն խնդրեցէք նաև «Իրօշակ»ը:

— Ֆիլիպէ. — Ա. Տ. «Զէյթունի անցեալէն և ներկայէն» ձեր ուղած գիրքերը կը ստանաք, բայց այստեղ սպառուած ըլլալուն համար քիչ մը ուշ:

— Անվէրս. — Ա. Ե. կը խնդրուի մեզ իմացնել ձեր հասցէն:

— Լօնտօն. — Սաուդ. զրկեցէք ձեր խոստացածները:

— Բուսուք. — Մ. Ա. ձեր պահանջը անտեղի է:

— Սիլվէն. — Խ. Յ. Թ. Ենոր հակալութիւն:

ՎԱՃԱՒԻՈՒՄ ԵՆ

Ե. Թոփանի խմբագրած պատերազմը «ԼՈՅՍ»

Գրպանի, Պասի եւ Սեղանի օրացոյցները:

«ԼՈՅՍ» օրացոյցները ՆՊԱՏԱՆ Է գիտութեան լոյս սփռել ժողովրդի իտալ խաւրով. հնար եղածի չափով պ սկերացնել հայի անցեալն ու ներկան, մշտական կիւր մղել այն հրատարակութիւններին գէմ, որոնք նիւթական շահերից զրգուած սնամարտութեան և տգիտութեան սերմեր են ցանում ընթերցողներին շրջանում և առասարակ ընթարցանութեան օգտակար նիւթ և անհրաժեշտ գիտելիքներ սարածել:

Այդ նպատակին հասնելու համար մենք չենք խնայել ոչ ջանք և ոչ նիւթական միջոցներ, աշխատակցութեան ենք հրաւիրել յայտնի հեղինակներին ու ժամանակներին, ընտրել երեք օրացոյցներն էլ պատկերազարդել ենք յատուկ պատրաստել սուած նկարներով, իսկ բովանդակութիւնը գաւառուի ենք այնպէս, որ օրացոյցներին իւրաքանչիւր տեսակը առանձին վերցրած մի ամբողջութիւն կազմէ և միեւնոյն ժամանակ ցանկալի ու օգտակար լրացուցիչ լինի միւս երկուսի համար:

Պուլկարիայում գնել փոփաքողները թող գիմեն Բուչուք Մ. Պատմաճեանի:

Գիշերն են. Գրպանի մէկ ֆր. Պատի 1,50, Աեղանի 5 ֆրանք:

Մանօթ. — Գնողներու գիւրու թիւն ընծայելու համար զրամի փոխարէն ընդունուած են նաեւ Պուլ. նամակադրօյմ, Բօսսի ծախսը վաճառողին վրայ:

Отговорникъ Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна